

2. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԱՊԱՀՐԿՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

REASONS FOR THE CENSUS AND ITS LEGAL BASIS WITHIN THE REPUBLIC OF ARMENIA

НЕОБХОДИМОСТЬ ПРОВЕДЕНИЯ ПЕРЕПИСИ НАСЕЛЕНИЯ И ОБЕСПЕЧЕНИЕ ЕГО ПРАВОВОГО ПОЛЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Արդի աշխարհում ցանկացած երկիր, որպես այդպիսին, անկախ իր հասարակարգի և մասնավորապես տնտեսակարգի առանձնահատկություններից, դատապարտված է պարբերաբար մարդահամարներ անցկացնելու: Այդ են վկայում նաև ՄԱԿ-ի հազարամյակի հանձնարարականները:

Հայաստանի Հանրապետության համար մարդահամարի անցկացումը նաև ժամանակի հրամայական էր, քանի որ.

- նախորդ, 1989 թ. մարդահամարի տվյալները, ինչպես վերը նշվեց, շատ շուտ դուրս եկան շրջանառությունից, 10 տարին մեկ անցկացվող մարդահամարների հաջորդականությունը խախտվել էր, և բնակչության ընթացիկ հաշվառումը վարվում էր 22 տարվա վաղեմություն ունեցող 1979թ. մարդահամարի տվյալների հիմքով,

- ազատական տնտեսակարգին անցնելու շրջանում Հայաստանում տեղի էին ունեցել քաղաքական, տնտեսական ու սոցիալական խոր վերափոխումներ, և այդ գործընթացները վերլուծելու, գնահատելու և կառավարելու համար պահանջվում էր ճշգրիտ և հավաստի տեղեկատվություն բնակչության թվաքանակի, աշխարհագրական տեղաբաշխման, նրա սոցիալ-ժողովրդագրական, զբաղվածության (տնտեսական ակտիվության), տնային տնտեսությունների բնակության պայմանների և այլ բնութագրերի վերաբերյալ,

- բնակչության վերաբերյալ վերը նշված կտրվածքներով ու հատկանիշներով ամբողջական տեղեկություններ ստացվում են միայն մարդահամարների անցկացման արդյունքում:

Մարդահամարի նախապատրաստման և անցկացման համար տեխնիկական և մեթոդաբանական օգնություն ստանալու նպատակով ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը դիմեց եվրամիության վիճակագրական ծառայությանը (Եվրոստատ):

Nowadays, any country is required to conduct a census regularly, regardless of the economic or social standing of its population. The millennium recommendations of the UN testify as much.

For the Republic of Armenia the undertaking of the census was also an issue of time:

- *The 1989 census results, as stated above, very rapidly became worthless. The order of the census conduction regularly taken every ten year had been disturbed, and current population estimations were being based on the census results from 1979, held 22 years ago.*

- *Since the last census a more open economy had arisen in Armenia, influencing political, social, and economic decisions. In order to better discuss, estimate, and govern these changes an exact and comprehensive picture of Armenia was required, addressing such basic concerns as its population size, geographic distribution, socio-demographic characteristics, economic activities, and household conditions.*

- *Complete information about a population with all its distributions and characteristics are only known as a result of conducting a census.*

In order to obtain technical and methodological assistance for preparing and conducting a census, the RA's National Statistical Service turned to Eurostat.

Since 1995, a cooperative program "census organization and conduction" was established with the Northern Ireland NI-CO consulting service experts, in the context of TACIS technical assistance programme which was continued up to 2002.

В современном мире, любая страна, как таковая, независимо от особенностей его общественного строя и, в частности, экономического строя, приговорена на периодическое проведение переписей населения. Об этом свидетельствуют директивы тысячелетия ООН.

Для Республики Армения, проведение переписи населения явилось также повелением времени, так как:

- Данные предыдущей переписи, проведенной в 1989 году, как уже указывалось выше, очень быстро вышли из оборота, была нарушена последовательность проведения раз в 10 лет переписи населения, и текущий учет населения велся на основании данных 22 летней давности, проведенной в 1979 году переписи населения;

- В период перехода к свободному экономическому строю, в Армении произошли политические, глубокие экономические и социальные перемены, и для анализа, оценки и управления этими процессами требовалась точная и достоверная информация о численности населения, географическом распределении, занятости (экономической активности), условиях проживания домовых хозяйств, его социально-демографическом и других характеристиках;

- Целостная информация по вышеуказанным аспектам получается только в результате проведения переписи населения.

С целью получения методологической и технической помощи для подготовки и проведения переписи населения, Национальная статистическая служба РА обратилась к статистической службе Евросоюза (Евростат).

Եվրոստատի կողմից նախկին ԽՍՀՄ-ի երկրներին ցույց տրվող TACIS տեխնիկական օգնության ծրագրի շրջանակներում՝ 1995 թվականից սկիզբ դրվեց Հյուսիսային Իռլանդիայի NI-CO կազմակերպության փորձագետների մասնակցությամբ՝ «Մարդահամարի կազմակերպում և անցկացում» համագործակցության համատեղ ծրագրին, որը շարունակվեց մինչև 2002 թվականը:

ՀՀ կառավարության 1995թ. հունվարի 11-ի թիվ 6 որոշումով սահմանվեց, որ 1999 թվականին Հայաստանի Հանրապետությունում պետք է անցկացվի հերթական մարդահամար:

Դրա նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման գործընթացները իրականացնելու համար 1997թ. մայիսին ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կազմում կազմավորվեց հատուկ աշխատանքային ստորաբաժանում՝ մարդահամարի վարչություն 5 բաժիններով.

1. Պլանավորման և ծրագրա-մեթոդաբանական
2. Կազմակերպչական
3. Մեքենայական ծրագրերի և տեխնոլոգիաների
4. Տեխնիկական նախագծերի մշակման
5. Վարչատնտեսական

Հաշվի առնելով վերոհիշյալը, ինչպես նաև առնվազն տասնամյակը մեկ մարդահամար անցկացնելու նախկին փորձն ու միջազգային առաջարկությունները՝ ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց 1999թ. անցկացնել հերթական մարդահամար: Դրա անցկացման մեթոդաբանությունն ու կազմակերպման գործընթացները, հրահանգչական փաստաթղթերը, ինչպես նաև կողավորման և մեքենայական մշակման տեխնոլոգիական գործընթացները փորձարկելու նպատակով 1997թ. նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 3-ն անցկացվեց փորձնական մարդահամար: Սակայն ՀՀ պետական բյուջեի միջոցների սղությանը պայմանավորված՝ ՀՀ կառավարության 1998 թ. դեկտեմբերի 3-ի թիվ 761 որոշմամբ մարդահամարի անցկացման օգնությունը հետաձգվեց: Մարդահամարի անցկացման իրավական դաշտն ապահովելու համար ՀՀ Ազգային ժողովը 1999թ. հոկտեմբերին ընդունեց «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի. «Հայաստանի Հանրապետությունում առաջին մարդահամարն անցկացվելու է 2001թվականին», իսկ ՀՀ կառավարության 2000թ. փետրվարի 19-ի թիվ 78 որոշմամբ դրա անցկացման ժամկետը սահմանվել է 2001թ. հոկտեմբերի 10-19-ը, իսկ դրան նախորդող փորձնական մարդահամարի անցկացման ժամկետը՝ 2000թ. սեպտեմբերի 6-ից 15-ը ներառյալ:

By the decision N6, made by the government of RA on January 11, 1995, it was decided that in 1999 in the Republic of Armenia the next census should be conducted.

For its preparations, undertaking and processing of materials, in 1997 May, in the RA National Statistical Service, a special working subdivision was created - Census Department with the 5 divisions:

1. *Planning and program-methodology*
2. *Organizational*
3. *Software and technologies*
4. *Technical projects development*
5. *Administrative.*

In order to test the methodology of its conduction and organizational processes, the instructive materials, as well as coding and technological processes, in 1997 from November 26th until December 3rd a Pilot Census was conducted. But the term of the census was postponed by the decision 761 in 1998 December the 3rd made by the RA Government, due to the shortages within the State budget.

In 1999 October the Parliament passed an RA law "On Census", according to which "The first Census in the Republic of Armenia will be undertaken in 2001", and by the 78th decision passed in 2000 February the 19th, the term of that Census conduction had been defined from 10 till 19 of October, 2001, and its Pilot Census term – the September 6-15th 2000.

поставлено начало совместной программы сотрудничества “Организация и проведение переписи населения”, которая продлилась до 2002 года.

Постановлением номер 6 правительства РА от 11 января 1995 года было решено, что в 1999 году в Республике Армения должна провестись очередная перепись населения. Для осуществления ее подготовки, проведения и обработки информации, в мае 1997 года в составе Национальной статистической службы сформировалось особое рабочее подразделение с пятью отделами управления переписи населения:

1. Планирования и программно-методологический;
2. Организационный;
3. Технологий и машинных программ;
4. Обработки технических проектов;
5. Административно-хозяйственный.

Учитывая вышеуказанное, а также международные предложения и прежний опыт проведения переписи как минимум раз в десять лет, правительство РА приняло постановление в 1999 году провести перепись Населения. С целью испытания методологических и организационных процессов, указательных документов, а также технологических процессов машинной обработки и кодировки ее проведения, с 26-го ноября по 3-е декабря 1997 года была проведена пробная перепись населения. Однако из-за скудности средств государственного бюджета РА, постановлением номер 761 правительства РА от 3-го декабря 1998 года, сроки проведения переписи населения были отложены.

Для обеспечения правового поля проведения переписи, Национальное Собрание РА, в октябре 1999 года, приняло закон РА “О переписи населения”, согласно которому: “Первая перепись населения в Республике Армения будет проведена в 2001 году”, а согласно постановлению номер 78 правительства РА от 19-го февраля 2000 года, срок ее проведения был установлен с 10-19-е октября 2001 года, а срок проведения предшествующей ей пробной переписи-с 6-15-ое сентября 2000 года